

Բանալի բառեր՝ դրամահատարան, թղթադրամներ տպագրող ֆաբրիկա, դրամանիշերի արտադրություն, պաշտպանված տպագրություն, պաշտպանական հատկանիշ, ռիսկերի կառավարում:

ՅՏԴ 336.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴՐԱՄԱՀԱՏԱՐԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միեր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման կարևոր փուլերից մեկը շրջանառության համար անհրաժեշտ դրամանիշերի արտադրության կազմակերպումն է, մասնավորապես՝ թղթադրամների տպագրումը և մետաղադրամների հատումը (այսուհետ՝ դրամանիշերի արտադրություն): Դրամանիշերի արտադրության նպատակով կենտրոնական բանկերը զգալի նախապատրաստական աշխատանքներ են կատարում պատասխանատու ստորաբաժանումների շրջանում՝ դրամահատարանների մասնագետների հետ: Ընդհանուր առմամբ՝ դրամանիշերի արտադրության համար պահանջվում է իրականացնել մի շարք գործընթացներ, որոնց թվին են դասվում.

• Որոշակի ժամանակահատվածի համար յուրաքանչյուր անվանական արժեքով դրամանիշերի արտադրության ծավալների գնահատում:

- Դրամանիշերի դիզայնի և տեխնիկական պահանջների հաստատում:
- Արտադրողի ընտրության նպատակով մրցույթի կազմակերպում:
- Արտադրողի կողմից դրամանիշերի տպագրման(հատման) համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում

(թուղթ, հատածույլեր, ներկանյութեր և այլն):

- Հիմնական արտադրության համար նմուշների պատրաստում և հաստատում:
- Դրամանիշերի խմբաբանակների արտադրություն:
- Արտադրանքի որակական ստուգումներ:
- Արտադրանքի փաթեթավորում:
- Առաքում պատվիրատուին:
- Պատվիրատուի կողմից վերջնական ստուգում և արտադրանքի ընդունում:

Նշված գործընթացները ընտրոշ են բոլոր երկրների դրամանիշերի արտադրության համար, սակայն կան որոշակի տարբերություններ կապված թողարկող կենտրոնական բանկի և դրամահատարանի նույն պետության տարածքում կամ տարբեր պետություններում գտնվելու պայմանից: Օրինակ՝ եթե կենտրոնական բանկը՝ դրամանիշերի արտադրությունը կազմակերպում է այլ երկրի դրամահատարանում, ապա պահանջվում է կառավարել արժեքների միջպետական փոխադրումների անվտանգ կազմակերպման հետ կապված ռիսկերը: Մասնավորապես՝ առաքվող արժեքները որոշ դեպքերում միևնույն կենտրոնական բանկ հասնելը կարող են հատել մի բանի պետությունների սահմանակետեր: Անկախ այն բանից, որ փոխադրումների ողջ պատասխանատվությունը կարող է կրել դրամանիշեր արտադրող դրամահատարանը, այնուամենայնիվ, կախված փոխադրվող բեռի հատուկ կարևորության հետ, կենտրոնական բանկերը ևս կրում են առանձնահատուկ պատասխանատվություն: Նշված խնդիրը արդիական է հատկապես Հայաստանի Հանրապետության համար՝ հաշվի առնելով հարևան երկրների կողմից շրջափակման և տարածաշրջանային առանձնահատուկ պայմանները: Նշված պարագայում հիմնականում հուսալի և կիրառելի է օդային տրանսպորտը, որի հետ կապված ծախսերը այլ փոխադրամիջոցների համեմատ՝ զգալի բարձր են:

Դրամանիշերի արտադրության կարևոր փուլերից մեկը թղթադրամների համար հատուկ չափանիշներով թղթի, իսկ մետաղադրամների համար՝ հատածույլերի արտադրությունն է: Թղթի արտադրությունը կարևորվում է նրանով, որ թղթադրամների պաշտպանական որոշ հատկանիշներ ներդրվում են հենց թղթի արտադրության փուլում (օրինակ՝ ջրանշանը, ներգիծը և այլն): Հատածույլերի արտադրության համար ևս պահանջում է հստակ սահմանափակումներ՝ համաձուլվածքի բաղադրության, ինչպես նաև որակական այլ չափանիշների նկատմամբ:

Դրամանիշերի արտադրությունը երկրի ներսում ամբողջական առումով իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրամահատումից բացի, երկրի ներսում իրականացվի թղթի արտադրությունը, մետաղաձուլումը և հատածույլերի պատրաստումը, դրամահատող հաստոցների արտադրությունը, ներկերի արտադրությունը և այլն: Համաշխարհային տնտեսության ներկայիս ապրանքարտադրության մասնագիտացման և մրցակցության պայմաններում եզակի են այն երկրները, որոնք կարող են ունենալ դրամահատման համար անհրաժեշտ բոլոր նյութերի և կիրառվող հաստոցների


արտադրությունը: Ուստի՝ բազմաթիվ երկրներում դրամահատարանները ներկրում են անհրաժեշտ չափով նյութեր և տեխնիկական միջոցներ:

Դրամանիշերի արտադրության տարբեր փուլերում պահանջվում է կենտրոնական բանկի մասնագետների ակտիվ համագործակցությունը դրամահատարանների մասնագետների հետ, մասնավորապես՝ որոշակի համագործակցություն է պահանջվում նաև դրամանիշերի արտադրման տարածքներում, որն այլ երկրներում տեղակայված դրամահատարանների դեպքում պահանջում են լրացուցիչ ժամանակ, ինչպես նաև մասնագետների գործուղման հետ կապված ծախսեր: Բնականաբար՝ նույն երկրի տարածքում տեղակայված կենտրոնական բանկի և դրամահատարանի մասնագետների համագործակցությունը ժամկետների և ծախսերի տեսանկյունից՝ ավելի արդյունավետ է:

Երկրի ներսում դրամահատարան ունենալու առավելությունների շարքին կարելի է դասել այն, որ թղթադրամների տպագրումից բացի, տպագրատներին կարելի է ծանրաբեռնել անձնագրերի, ակցիզային և փոստային դրոշմանիշերի, ինչպես նաև պաշտպանված տպագրություն պահանջող այլ նյութերի արտադրության համար:

Հայաստանի Հանրապետությունում դրամանիշերի արտադրություն ունենալու նպատակահարմարության գնահատման կարևոր գործոնների շարքին է դասվում դրամանիշերի արտադրության ծավալները, որն էլ հիմնականում պայմանավորված է երկրի բնակչության թվով, կանխիկ դրամով իրականացվող վճարումների մակարդակով և այլն (տես՝ գծապատկերը):

ՀՀ կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի զանգվածի դինամիկան՝ քանակական կտրվածքով (մլն հատ)¹



Ինչպես երևում է ներկայացված գծապատկերից, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի զանգվածը դիտարկված ժամանակահատվածում քանակական կտրվածքով դրսևորել է աճի մտում, որն էլ հավաստում է շրջանառության պահանջը բավարարելու համար անհրաժեշտ դրամանիշերի արտադրության շարունակական պահանջի մասին: Բնականաբար՝ թղթադրամներն ունեն շրջանառության համար պիտանելիության կարճ ժամկետ, քան մետաղադրամները, ուստի՝ թղթադրամների ավելի հաճախ տպագրությունը բացի, զանգվածի աճի ծավալներից պետք է ապահովեն նաև հնամաշ թղթադրամները նորերով փոխարինելու ծավալները:

Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով արդի ժամանակաշրջանում կենտրոնական բանկերը և դրամահատարանները հատկապես ուշադրություն են դարձնում շրջանառության մեջ դրամանիշերի պիտանելիության (օգտագործման) ժամկետների երկարացման ուղղությամբ: Մասնավորապես՝ ավանդաբար օգտագործվող թղթից բացի, կիսառում են նաև տարբեր բաղադրության նյութեր (պոլիմերներ, թղթի և պոլիմերների համադրություններ և այլն), որոնք պահպանելով թղթադրամների ավանդական տեսքը՝ եսպես ավելացնում են դրանց օգտագործման ժամկետները:

Դրամանիշերի արտադրության կարևոր պահանջներից է դրանց պաշտպանական հատկանիշների շարունակական բարելավումը և նորամուծությունները: Տեխնիկական առաջընթացի ժամանակակից պայմաններում այն նպաստում է դրամանենգության դեմ պայքարին, ինչպես նաև քաղաքացիների կողմից դրամանիշերի իսկության դիտարկում և արագ ստուգմանը: Դրամահատարանի տեխնիկական հագեցվածության բարձր մակարդակը և նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները պահանջում են շարունակական ներդրումներ, անձնակազմի ուսուցում, վերապատրաստում և այլն:

Այսպիսով, դրամահատարան հիմնելու դեպքում պետք է հաշվի առնել, որ ժամանակակից դրամանիշերի արտադրության համար կիրառվող պաշտպանական հատկանիշների և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով պահանջվելու է մշտապես հետևել ոլորտի զարգացման միտումներին, նորարարություններին, ինչպես նաև ապահովել շարունակական ներդրումներ:

Ժամանակակից դրամահատարանները, զուտ դրամահատությունից, բացի ներգրավված են նաև այլ ոլորտներում: Մասնավորապես՝ կարելի է նշել այլ պաշտպանված տպագրանյութերի արտադրությունը (օրինակ՝ անձնագրեր, վկայականներ և այլն), պլաստիկ քարտերի արտադրությունը, կանխիկ դրամ հաշվող, ստուգող տեխնիկական միջոցների արտադրությունը և այլն: Համաշխարհային պրակտիկայում զարգանում է նաև բանկային համակարգում կանխիկ դրամի շարժերի վերաբերյալ ավտոմատացված տվյալների հավաքագրման և կառավարման ծրագրերի ստեղծման հետ կապված աշխատանքները²:

Հայաստանի Հանրապետությունում դրամահատարան ունենալու նպատակահարմարության հարցին գնահատական տալու համար առաջարկում ենք ինդիքը դիտարկել անվտանգության և հնարավոր ռիսկերի նվազեցման, ինչպես նաև՝ տնտեսական արդյունավետության տեսանկյուններից:

Անվտանգության և հնարավոր ռիսկերի նվազեցման առումով իհարկե՝ նպատակահարմար է Հայաստանի Հանրապետությունում ունենալ դրամահատարան, որի առկայությունը հնարավորություն կտա դրամանիշերի արտադրության ոլորտում զերծ մնալ այլ երկրների հետ կապված հնարավոր ռիսկերից: Դրամահատարանի առկայության դեպքում կնվազեն դրամանիշերի արտադրությունից հետո դրանք պատվիրատուին հասցնելու ժամանակը, ճանապարհի հետ կապված ռիսկերը և փոխադրումների հետ կապված ծախսերը: Կենտրոնական բանկի և դրամահատարանի մասնագետների համագործակցությունը հատկապես՝ արտադրական տարածքում պահանջվող քննարկումների ու ճշգրտումների առումով, կդառնան ավելի օպերատիվ և նվազ ծախսատար:

Դրամահատարանի կառուցման ու շահագործման համար պահանջվում են զգալի ծախսեր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրամահատման ոլորտում կիրառվող սարքավորումները, ոլորտի յուրահատկությունների և նոր տեխնոլոգիաների կիրառման հետ կապված, պահանջում են անընդհատ նորացումներ: Դրամահատարանի կառուցման համար պահանջվող ներդրումների ետզնման ժամկետը նախնական գնահատականներով կարող է գերազանցել մեկ տասնամյակը: Դրամահատարանի կառուցման պարագայում պետության և քիզնեսի շահերը պետք է համահունչ լինեն: Մշտապես պետք է հաշվի առնել այն պայմանը, որ դրամահատարանը պետք է մրցունակ լինի և դրամանիշերի արտադրության համար հայտարարվող մրցույթներում կարողանա ճիշտ ներկայացնել իր առավելությունները: Մասնավորապես՝ արտերկրի դրամահատարանների հետ համեմատած առավելությունների շարքին կարելի է դասել արտադրանքը պատվիրատուին հասցնելու համար պահանջվող տրանսպորտային ծախսերը, պատվիրատուի մասնագետների հետ համագործակցության համար պահանջվող ժամանակը, ինչպես նաև գործուղումների համար պահանջվող ծախսերը և այլն:

Կարևորում ենք նաև դրամահատարանի դերը տարածաշրջանում պաշտպանված տպագրության համար հայտարարված մրցույթներին լուրջ մրցակցություն ձեւավորելու և որոշակի պատվերներ կատարելու առումով:

Օգտագործված գրականություն

1. www.cba.am
2. www.gi-de.com

Ներկայացվել է 18.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.